# ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՏԻԿ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՂԸ. ՊԼԱՏՈՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ԱՍԱՏՐՅԱՆ Գ. Ե.

*Վերածնության դարաշրջանի և հետագա ժամանակների ակադեմիական ավանդույթները չեն առաջացել ամայի տեղում, գիտակրթական վակուումում: Դրանց ձևավորումը պայմանավորված էր եվրոպական գիտակրթական մշակույթի նախորդ զարգացմամբ, որի արմատները գնում են դեպի դարերի ու հազարամյակների խորքը:*

*Գիտության և կրթության եվրոպական հինավուրց ու հարուստ ավանդույթում բացառիկ տեղ ունի անտիկ հոգևոր ժառանգության անբաժանելի մաս հանդիսացող Պլատոնի (մ.թ.ա. 427, Աթենք կամ Էգինա - 347, Աթենք) փիլիսոփայական ակադեմիան:*

*Անտիկ աշխարհի այդ ինքնատիպ ու նշանավոր գիտակրթական օջախը, որը մարդկության հոգևոր մշակույթի պատմության մեջ հայտնի է նաև Պլատոնի փիլիսոփայական դպրոց անվանումով, մ.թ.ա. մոտ 387 թվականին Աթենքում հիմնադրել է Պլատոնը:*

*Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Անտիկ փիլիսոփայության պատմության և հին հունական մշակույթի աղբյուրագիտական հետազոտությունների հիման վրա մեր օրերում փիլիսոփայական հիմնարար գրականության մեջ, ինչպես նաև տարբեր հեղինակավոր հանրագիտարանային աղբյուրներում շրջանառվում են Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի հիմնադրման՝ իրարից երկամյա հեռավորության վրա գտնվող երկու տարեթվեր, այն է՝ մ.թ.ա. 387[1] և 385[2] թվականները: Ակադեմիայի հիմնադրման առավել արժանահավատ տարեթիվ պետք է համարել մ.թ.ա. 387 թվականը[3]:*

---

[1] *Философская энциклопедия, т. 1, М., 1960, с. 28. Большой энциклопе-дический словарь, М., 1998, с. 26.*

[2] *Философский энциклопедический словарь, М., 1983, с. 15.*

[3] *Խոր դրամատիզմով է լեցուն Ակադեմիայի հիմնադրման նախապատմությունը: Մ.թ.ա. 399 թվականին Աթենքի ժողովրդական ժողովը (ձայների 280:220 հարաբերակցությամբ) մահվան դատապարտեց Սոկրատեսին (ծնվել է մ.թ.ա. մոտ 470-ին)՝ "հույներից ամենահմաստունին", որը Պլատոնի սիրելի ուսուցիչն էր: Իրադարձությունների նման ընթացքից ցնցված և աթենական իրականությունից հիասթափված՝ Պլատոնը թողնում է հայրենի քաղաքը և ուղևորվում Մեգարա, որտեղ ապրում և փիլիսոփայություն էր ուսուցանում Սոկրատեսի աշակերտներից մեկը՝ Էվկլիդեսը: Սկսվում է Պլատոնի դեգերումների շուրջ տասնամյա շրջանը: Պատմական տարբեր վկայությունների համաձայն՝ այդ ընթացքում Պլատոնն այցելում է Թրակիա, լինում է Պարսկաստանում ու Եգիպտոսում, ըստ որոշ աղբյուրների՝ նաև Փյունիկիայում ու Հրեաստանում, Ասորեստանում ու Բաբելոնում: Մ.թ.ա. 388 թվականին Պլատոնն այցելում է Հարավային Իտալիա, Սիցիլիա: Սիրակուզա քաղաքում նա անձնական շփումներ է հաստատում պյութագորականների հետ, մոտիկից ծանոթանում նրանց ուսմունքին: Այստեղ առաջին այցելության ժամանակ ներկայանում է քաղաքի տիրակալ Դիոնիսիոս Ավագին՝ նրան առաջարկելով հասարակական վերափոխումների իր ծրագիրը: Սակայն պալատական խարդավանքների ազդեցությամբ*

Ակադեմիան փիլիսոփաներին միավորող մի ընկերություն էր, ազատ ու իրավահավասար մարդկանց միություն, որի հիմնական նպատակն էր մուսաների համատեղ մեծարումը, նրանց երկրպագումը: Ի դեպ, հիմնականում նման նպատակ էին հետապնդում նաև դրանից առաջ մինչսոկրատականների ստեղծած նմանատիպ միությունները և ամենից առաջ՝ պյութագորականների միությունը:

Ակադեմիայի անդամները վարում էին ասկետական կյանք՝ իրենց զրկելով աշխարհիկ հաճույքներից: Նրանք կամովին սահմանափակում էին իրենց քունը, հրաժարվում մսակերությունից, ձեռնպահ մնում մարմնական սիրուց:

Միության գլուխը ղեկավարն էր՝ սքոլարքոսը, որին իրենց կազմից ընտրում էին Ակադեմիայի անդամները:

Պլատոնի հիմնադրած հաստատությունը պահպանվեց նաև նրա մահից հետո նրան հաջորդած ղեկավարների՝ սքոլարքոսների միջոցով, որոնցից առաջինը՝ Սպևսիպոսը (մ.թ.ա. մոտ 407, Աթենք – 339, Աթենք), Պլատոնի կողմից նշանակվեց ըստ կտակի, իսկ նրա հաջորդներն ընտրվում էին քվեարկությամբ: Ուսումնագիտական հաստատության ղեկավարի ընտրովիության այդ սկզբունքը, ի դեպ, դարեր շարունակ ընդօրինակման արժանի նախադեպ է ծառայել:

Ակադեմիային վիճակված էր պատմական մեծ առաքելություն, այն է՝ դառնալու անտիկ ու միջնադարյան փիլիսոփայական մտքի, գիտության ու կրթության ինքնատիպ ու նշանավոր օջախ: Մի փոքր առաջ անցնելով՝ նշենք, որ Ակադեմիան գործեց շուրջ 1000 տարի՝ ընդհուպ 529 թվականը, երբ այն Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրի հատուկ էդիկտով փակվեց որպես հեթանոսական գաղափարախոսության օջախ:

Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի հիմքում ի սկզբանե դրվեցին այնպիսի հիմնարար սկզբունքներ ու արժեքներ, որոնք ոչ միայն պայմանավորեցին Ակադեմիայի շուրջ հազարամյա գործունեությունը, այլև նրա հավատարմությունն իր որդեգրած առաքելությանը, հիմնադրի փիլիսոփայական հավատամքին:

Այն առավել կարևոր նախադրյալների մեջ, որոնք ապահովում էին Ակադեմիայի միասնությունը, կայունությունն ու կենսունակությունը, առանձնանում են հատկապես հաստատությունում իրականացվող գիտակրթական ծրագրերը, կրթության բուն բովանդակությունը՝ հիմնված ռացիոնալ-ինտելեկտուալ և բարոյահոգևոր բաղադրիչների ներդաշնակ զուգակցման վրա:

---

*տիրակալը հրամայում է իր հավատարիմ մարդկանց՝ Պլատոնին վաճառքի հանել ստրուկների շուկայում: Շուտով, արդեն որպես գնված ստրուկ, վերջինս հայտնվում է Էգինա կղզում: Այնուհետև, ըստ որոշ աղբյուրների, Պլատոնը հետգնվում և ազատ է արձակվում Դիոնիսիոսի հանձնարարությամբ: Ըստ այլ տեղեկությունների՝ նրան գնում և ազատություն է շնորհում պյութագորական Արքիդեսը, որն իբր եղել է Պլատոնի ուսուցիչը: Ազատվելով ստրկությունից և վերադառնալով Աթենք՝ Պլատոնը որոշում է հեռու մնալ քաղաքականությունից և լիովին նվիրվել փիլիսոփայությանը: Այդ նպատակով նա մ.թ.ա. IV դարի 80-ական թվականների սկզբներին Աթենքի արվարձաններից մեկում ձեռք է բերում մի շինություն՝ պարտեզի հետ, որտեղ էլ հիմնում է իր փիլիսոփայական դպրոցը, որը շուտով կոչվեց Պլատոնի փիլիսոփայական ակադեմիա: Այն սկզբում կրում էր Հեկադեմիա անունը, իսկ Ակադեմիա անվանումը ստացավ հին հունական դիցա-բանական հերոս Ակադեմոսի անվամբ:*

Ակադեմիայի՝ Պլատոնի մշակած կրթական ծրագրում ընդգրկված էին հինգ կարևոր առարկաներ՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն, երաժշտություն և, իհարկե, ակադեմիական կրթական ծրագրի զարդը հանդիսացող փիլիսոփայություն: Ընդ որում, ուշագրավ է, որ դրանք հենց այն առարկաներն էին, որոնք հետագա դարերում համալրվելով ևս երկուսով՝ քերականությամբ և ճարտասանությամբ, կազմեցին գիտությունների այն նշանավոր յոթնյակը, որոնք միջնադարում ստացան "ազատ արվեստներ" ("artes liberales") անվանումը և աշխարհիկ առարկաների կրթամասի ձևով մտան միջնադարյան համալսարանների կրթական ծրագրերի մեջ ու դասավանդվում էին այդ հաստատություններում[4]:

Պլատոնի ակադեմիան հեռանկարում հետապնդում էր երկու հիմնական նպատակ, որոնցից մեկը փիլիսոփայական հետազոտությունների իրականացումն էր, կեցության և մտածողության հիմնարար սկզբունքների մշակումը, մյուսը՝ լայն մտահորիզոնով օժտված և խոր գիտելիքների տիրապետող փիլիսոփաների պատրաստումը, փիլիսոփաներ, որոնք, Պլատոնի պատկերացմամբ, կոչված էին կառավարելու երկիրը և մարդկանց բերելու թե՛ անձնական և թե՛ հասարակական բարեկեցություն: Այս առիթով նկատենք, որ Պլատոնի "Պետություն" աշխատության "Գիրք հինգերորդի"՝ "Պետության ղեկավարներ պետք է լինեն փիլիսոփաները" դրվագում Սոկրատեսը, դիմելով իր զրուցակցին՝ Գլավկոնին[5], ասում է. "Քանի դեռ պետություններում չեն թագավորի փիլիսոփաները, կամ ներկա այսպես կոչված արքաներն ու տիրակալները չեն սկսի ազնվորեն և հիմնավոր փիլիսոփայել, և դրանք՝ պետական իշխանությունը և փիլիսոփայությունը չեն միահյուսվի մեկ ամբողջության մեջ, և քանի դեռ պարտադիր կերպով չեն հեռացվի այն մարդիկ, իսկ դրանք շատ են, ովքեր այժմ զատ-զատ ձգտում են կա՛մ իշխանության, կա՛մ փիլիսոփայության՝ մինչ այդ, թանկագին Գլավկոն, պետությունները չեն ազատվի չարիքներից..."[6]: Այսպիսին է պետությունների և երկրների կառավարման պլատոնական իդեալը՝ հիմնված այն հաստատ համոզմունքի վրա, որ չի կարող բանական համարվել առաքինի մարդուն մահվան դատապարտող աշխարհը:

Ակադեմիայի շուրջ 1000-ամյա պատմական ուղին հարթ ու դյուրին չի ընթացել: Այն ուղեկցվել է պատմական գործընթացին հատուկ ելևէջներով ու տարբերակներով, իսկ երբեմն նաև՝ բարդ ու կտրուկ անցումներով, որոնք և պայմանավորել են Ակադեմիայի զարգացման պատմական փուլերը: Ակադեմիայի գործունեության տարբեր փուլերի ձևավորման գործում նշանակալի դեր են կատարել մի կողմից՝ պլատոնականության՝ որպես ազդեցիկ փիլիսոփայական ուսմունքի անցած ուղին, նրա պատմական ճակատագիրը, մյուս կողմից՝ այս կամ այն ժամանակաշրջանում ակադեմիայի ղեկի մոտ հայտնված մտածողների՝ սքոլարքոսների տեսական-փիլիսոփայական հակումները,

---

[4] Словарь латинских крылатых слов, М., 1982, с. 80, նաև՝ Словарь ино-странных слов, М., 1989, с. 613.

[5] Գլավկոնը (մ.թ.ա. 445-382 թթ.) հին հունական փիլիսոփա է, Պլատոնի "Պետություն" աշխատությունում Սոկրատեսի տրամախոսությունների առավել ակտիվ մասնակիցներից մեկը. նա Պլատոնի ավագ եղբայրն է:

[6] **Платон.** Государство, СПб., 2005, с. 318 (V 473 e).

նրանց գոյաբանական (օնտոլոգիական) և իմացաբանական (գնոսեոլոգիական) հայացքները:

Անտիկ փիլիսոփայության ու գիտության պատմության մեջ հանդիպում են Ակադեմիայի անցած ուղու պարբերացման, նրա փուլաբաժանման մի քանի տարբերակներ:

Ցիցերոնի ժամանակներից է գալիս Ակադեմիայի գործունեության բաժանումը երկու շրջանների՝ Հին ակադեմիա և Նոր ակադեմիա: Ընդ որում, Նոր ակադեմիան իր թվագրությունն սկսում է Արքեսիլայոսից (մ.թ.ա. 315-241 թթ., նա, որպես սքոլարքոս, Ակադեմիան գլխավորել է մ.թ.ա. 265 թվականից) և շարունակում մինչև Անտիոքոս Ասկալոնացին (մ.թ.ա. մոտ 130 - մոտ 68 թթ. որը Ակադեմիայի ղեկավարի պաշտոնն ստանձնել է մ.թ.ա. 88 թվակա-նին):

Ավելի ուշ Ակադեմիան բաժանում էին երեք շրջանի՝ Հին ակադեմիա, Միջին ակադեմիա՝ Արքեսիլայոսի գլխավորությամբ, և Նոր ակադեմիա՝ Կարնեադես Կիրենացու (մ.թ.ա. 214-129 թթ.) գլխավորությամբ[7]:

Հելլենիզմի դարաշրջանում գոյություն են ունեցել նաև Ակադեմիայի պատմության ուրիշ բաժանումներ: Եվ, այնուամենայնիվ, դասական պետք է համարել Ակադեմիայի պատմության բաժանումը հինգ հիմնական փուլերի, այն է՝ Հին (Առաջին) ակադեմիա, Միջին (Երկրորդ) ակադեմիա, Նոր (Երրորդ) ակադեմիա, Չորրորդ ակադեմիա և Հինգերորդ ակադեմիա:

Ակադեմիայի զարգացման առաջին շրջանը Հին ակադեմիայի շրջանն է (մ.թ.ա. 387-265 թթ.): Այդ ընթացքում Ակադեմիան ղեկավարել է ինքը՝ Պլատոնը (մ.թ.ա. 387-347 թթ.), իսկ այնուհետև կառավարել են նրա աշակերտներն ու համախոհները՝ Սպևսիպոսը[8] (մ.թ.ա. մոտ 347-մոտ 339 թթ.), Քսենոկրատես Քաղկեդոնացին (մ.թ.ա. մոտ 339-մոտ 314 թթ.), Պոլեմոնը (մ.թ.ա. մոտ 315-մոտ 270 թթ.) և Կրատետը (մ.թ.ա. մոտ 270-մոտ 265 թթ.): Ակադեմիայում մեծ նշանակություն էր տրվում մաթեմատիկային. դա իր արտացոլումն էր գտել նաև Ակադեմիայի մուտքին դրոշմված՝ "Ոչ երկրաչափը թող ներս չմտնի" նշանաբանում:

Այդ շրջանում Ակադեմիայում չափազանց ուժեղ էր պյութագորականության ազդեցությունը: Իր փիլիսոփայական էվոլյուցիայի ամբողջ ընթացքում Պլատոնը եղել է Պյութագորասի փիլիսոփայության և հատկապես թվերի ու դրանց արտասովոր, գերբնական հատկությունների մասին նրա ուսմունքի խոր ազդեցության ներքո: Եվ պատահական չէ, որ Պլատոնը փիլիսոփայական մտքի պատմության մեջ մտել է որպես պյութագորականության՝ անտիկ փիլիսոփայության այդ առավել ազդեցիկ ուղղություններից մեկի, պատմական զարգացման չորս փուլերից երկրորդի սկզբնավորողն ու եզրափակողը, փուլ, որն ստացել է "պլատոնացող պյութագորականություն" անվանումը:

Սպևսիպոսը գրել է մի շարք տրակտատներ և տրամախոսություններ, այդ թվում՝ "Պյութագորյան թվերի մասին" աշխատությունը: Նա պլատոնյան գաղափարները

---

[7] Философский энциклопедический словарь, с. 15.

[8] Նա Պլատոնի քրոջ՝ Պոտոնայի որդին էր, և Ակադեմիայի սքոլարքոս էր նշանակվել Պլատոնի կողմից՝ ըստ կտակի, մյուսներն ընտրվել են Ակադեմիայի անդամների ժողովում:

*փոխարինեց թվերով, որոնք ընկալում էր որպես զգայական իրերից կտրված սուբստանցներ, սակայն միաժամանակ դրանք մեկնաբանում էր ոչ թե Պլատոնի "իդեալական թվերի" նման, այլ որպես խորհրդապաշտական թվեր:*

*Հին ակադեմիան պաշտպանում էր ուշ Պլատոնի փիլիսոփայության պյութագորյան միտումները, զարգացնում էր "Տիմեոսի" կոսմոգոնիան: Այդ շրջանում Ակադեմիայում գլխավորապես զբաղվում էին խորհրդապաշտական մաթեմատիկայով և նրա վրա կառուցված յուրահատուկ դիալեկտիկայով ու փիլիսոփայությամբ:*

*Դիալեկտիկական վեճերի տեխնիկական կողմի գերագնահատումն ու բացարձակացումը, որոնց ընթացքում փորձ էր արվում հավասարապես ապացուցել հակադիր դատողությունների ճշմարտացիությունը և դրա վերածումը աշխարհայացքային սկզբունքի՝ ուղեկցված ստոյիցիզմի դեմ աստիճանաբար ուժգնացող դիմակայությամբ, հանգեցրեց այսպես կոչված ակադեմիական սկեպտիցիզմի առաջացման, որը և պայմանավորեց Միջին ակադեմիայի տեսական-փիլիսոփայական ու իմացաբանական դիրքորոշումը և անցումը դրան:*

*Իր պատմական սահմանափակությամբ ու պարզորոշ արտահայտված իդեալիստական ուղղվածությամբ հանդերձ՝ Հին ակադեմիան զգալի դեր կատարեց փիլիսոփայական մտքի առաջընթացի, մաթեմատիկայի ու աստղագիտության զարգացման ու տարածման գործում:*

*Միջին կամ Երկրորդ ակադեմիան իր թվագրությունը սկսում է մ.թ.ա. 265 թվականից: Նրա հիմնադիրը Արքեսիլայոսն էր, որը, Ակադեմիայի սքոլարքոսի պաշտոնն ստանձնելով մ.թ.ա. 265 թվականին, Ակադեմիան ղեկավարեց 24 տարի՝ ընդհուպ մ.թ.ա. 241 թվականը, երբ նրան փոխարինեց Լակիդ Կիրենացին (մ.թ.ա. 241 կամ 240 թ. մինչև 224 կամ 222 թ.): Այնուհետև Միջին ակադեմիան ղեկավարեցին Տելեկլետը, Էվանդրը, Գեգեսինը[9]:*

*Արքեսիլայոսը փիլիսոփայական սկեպտիցիզմի հայտնի տեսաբան էր, և նրա օրոք Ակադեմիայի գործունեության մեջ սկիզբ է առնում նոր շրջան՝ Ակադեմիան թևակոխում է էվոլյուցիայի սկզբունքորեն նոր փուլ՝ ուղղափառ պլատոնականությունից անցում կատարելով սկեպտիցիզմի դիրքերը:*

*Ելնելով զգայական իմացության հավաստիության քննադատությունից՝ Արքեսիլայոսը հանգեց սկեպտիցիզմին: Ի տարբերություն ստոյիցիզմի, ըստ Արքեսիլայոսի, չկա ճշմարտության անվիճելի չափանիշ, և ամեն ինչ կարող է վիճարկվել փաստարկների միջոցով, որոնք, սակայն, նույնպես հավանական բնույթ ունեն: Բացարձակ ճշմարտության ճանաչումը, նրա համոզմամբ, անմատչելի է մարդկային իմացության համար: Այդ պատճառով անհրաժեշտ է սահմանափակվել միայն հավանական գիտելիքով, որը բավարար է պրակտիկ գործունեության համար: Ողջամտությունը պետք է հենվի հավանականության կշռադատության վրա: Յուրաքանչյուր դրույթի*

[9] *Философская энциклопедия, т. 1, с. 28.*

ճշմարտացիության մասին խոսելիս նա ասում էր. “Դա դեռ պետք է քննության առնել”, “Դա դեռ պետք է հետազոտել”, “Դա դեռ պետք է ապացուցել”:

Հետևելով Էպիկուրին՝ նա գտնում էր, որ կյանքի նպատակը ոգու անխռովությունն է՝ ատարակսիան:

Միջին ակադեմիան իր գործունեությունը շարունակեց մինչև մ.թ.ա. II դարի կեսերը, երբ Ակադեմիայի ղեկի մոտ կանգնեց Կարնեադես Կիրենացին, որը և դարձավ Նոր կամ Երրորդ ակադեմիայի հիմնադիրը: Նոր ակադեմիայի ղեկավարի պաշտոնում Կարնեադեսին հաջորդել է Կրատետը, իսկ այնուհետև՝ Կլիտոմաքոս Կարթագենացին (մ.թ.ա. մոտ 129-մոտ 110 թթ.): Կարնեադեսը, լինելով սկեպտիցիզմի ջատագով, զարգացրեց Արքեսիլայոսի սկեպտիկական փիլիսոփայությունը, նրա առաջ քաշած ակադեմիական սկեպտիցիզմի սկզբունքները՝ դրանց հակադոգմատիկական և վիճաբանական ուղղվածությամբ հանդերձ:

Իսկ իր ամբողջության մեջ Նոր ակադեմիան առանձնացավ նրանով, որ ավելի խորացրեց Միջին ակադեմիայի սկեպտիցիզմը և կատաղի հարձակումներ ձեռնարկեց ստոյիկների դոգմաների վրա:

Ակադեմիական սկեպտիցիզմի սկզբունքների հաստատումը յուրահատուկ վերադարձ նշանավորեց դեպի Ակադեմիայի գործունեության առաջին շրջանի արժեքները, դեպի փիլիսոփայության սոկրատյան մեթոդները: Ինքը՝ Կարնեադեսը, ոչինչ չի գրել, և նրա դասախոսությունները մեզ չեն հասել: Աղբատիկ աղբյուրները վկայում են, որ նա դավանել է սկեպսիսին բնորոշ մի ուսմունքի, որով անհնարին էր համարվում իսկական ճշմարտությունը, և ամեն մի ճանաչողություն հանգեցվում էր, լավագույն դեպքում, հավանական պնդման: Վերլուծվում էին այդ հավանականության տարբեր աստիճանները, սակայն դրանցից ոչ մեկը չէր համարվում ճշմարտությանը հավասար:

Կարնեադեսը բացարձակացնում էր գիտելիքի անհնարինության սկզբունքը և դրանով իսկ՝ ամեն մի դոգմատիզմի անհավաստիությունը, որը պաշտպանություն էր գտնում Նոր ակադեմիայում՝ ընդհուպ Փիլոն Լարիսեցին, որին կոչում են Չորրորդ ակադեմիայի հիմնադիր, քանզի հրաժարվելով ամբողջական սկեպտիցիզմից, նա դիմում էր պլատոնիզմի և ստոյիցիզմի միջև ընդհանուր հիմքի որոնումներին: Ուղղակի վերադարձ դոգմատիզմին տեղի է ունենում Անտիոքոս Ասկալոնացու (մ.թ.ա. մոտ 130 - մոտ 68 թթ.) մոտ. նա կոչ էր անում վերադառնալ Հին ակադեմիայի ուսմունքին՝ “Հետևել հներին”:

Փիլոն Լարիսեցու մասին պատմական տեղեկությունները սուղ են: Նույնիսկ նրա ծննդյան և մահվան ստույգ թվերը հայտնի չեն: Հայտնի է, որ նա մ.թ.ա. 109 թվականին ստանձնել է Չորրորդ ակադեմիայի ղեկավարի պաշտոնը և այն վարել մինչև մ.թ.ա. 88 թվա-կանը: Չորրորդ ակադեմիան գոյատևել է մինչև մեր թվականության սկիզբը: Հայտնի է նաև, որ մ.թ.ա. I դարի 80-ականներին Հռոմում նրան ունկնդրել է Ցիցերոնը: Նա հետագայում շարադրել է Հինգերորդ ակադեմիայի հիմնադիր Անտիոքոս Ասկալոնացու ուսմունքը:

Ակադեմիան սկեպտիցիզմի դիրքերից փոխադրելով դոգմատիզմի դիրքերը՝ Փիլոն Լարիսեցին մոտենում էր ստոյիցիզմին: Սկզբում լինելով ակադեմիական սկեպտիկներ Կարնեադեսի և Կլիտոմաքոսի աշակերտը՝ Փիլոն Լարիսեցին հատուկ նշանակություն էր տալիս բարոյագիտության հարցերին՝ տարբերակելով լավն ու վատը, դրական ու բացասական արարքները, ընդունում էր գնա-հատման չափանիշի գոյությունը: Նա մերժում էր իրերի ամեն մի իմացությունից "ձեռնպահ մնալու" ստոյիկյան կանոնը, սակայն միաժամանակ չէր ընդունում բացարձակ գիտելիքը և ճշմարտության չափանիշները՝ հենվելով միայն հավանականության վրա[10]:

Ակադեմիայի ղեկավարի պաշտոնում մ.թ.ա. 88 թվականին Փիլոն Լարիսեցուն փոխարինում է Անտիոքոս Ասկալոնացին: Հինգերորդ ակադեմիայի հիմնադիրը Պլատոնի ակադեմիան սկեպտիցիզմից վերադարձրեց դեպի Հին ակադեմիայի ավանդույթները, որով և դարձավ ակադեմիայի զարգացման նոր՝ հինգերորդ փուլի սկզբնավորողը: Անտիոքոսի հակասկեպտիկական հակվածության հետ է կապված նրա վրա ստոյիցիզմի թողած ազդեցությունը: Նրան են պատկանում սկեպտիցիզմի դեմ մի շարք համոզիչ փաստարկներ. արդեն իսկ հավանականության հասկացությունը, ըստ Անտիոքոսի, ենթադրում է ճշմարտության գոյություն. կամ՝ հերքել որևէ բան նշանակում է օգտվել ապացուցումից, ուրեմն սկեպտիկն իրավունք չունի ժխտելու ապացույցների ուժը: Նույնն է նաև այն դեպքում, երբ ասվում է, թե բոլոր պատկերացումները կեղծ են, քանզի նշանակում է, որ արդեն կա ճշմարիտի ու կեղծի տարբերակման համոզմունք, մի բան, որ անհիմն ժխտում են սկեպտիկները:

Իր փիլիսոփայական հայացքներով Անտիոքոսը էկլեկտիկ էր և աշխատում էր Պլատոնի ուսմունքը զուգակցել պյութագորականության, Արիստոտելի գաղափարների և ստոյիցիզմի հետ. ըստ նրա՝ ստոյիկների, պերիպաթետիկների և պլատոնականների դոկտրինա-ներն իրենց հիմքում համընկնում են: Նա ընդունում էր ստոյիկների "ապրել ըստ բնության" կանոնը, թեև դրա ըմբռնման հարցում տարբերվում էր ստոյիկներից՝ առաքինության հետ մեկտեղ ընդու-նելով նաև ֆիզիկական կամ արտաքին բարիքը: "Տիմեոսի" ուս-մունքը նա զուգակցում էր հատկությունների մասին տեսության հետ, Պլատոնի գաղափարները հասկանում ստոյիկյան "ընդհանուր հասկացությունների" ոգով: Ընդհանուր առմամբ, Անտիոքոսը հող նախապատրաստեց միջին պլատոնիզմի համար, սակայն նա հրաժարվում էր այդ ուսմունքի ստոյիկյան տարրերից:

Մ.թ.ա. 86 թվականին, երբ Սուլլան գրավեց Աթենքը, ավերվեցին Պլատոնի ակադեմիայի շինությունները, կտրատվեցին ակադեմիական այգու ծառերը, ոչնչացվեց Ակադեմիայի գրադարանը: Այդ ժամանակներից մինչև մ.թ. 176 թվականը, երբ Մարկոս Ավրելիուսը (121-180 թթ.) Աթենքում հիմնեց չորս փիլիսոփայական ամբիոն, Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի ճակատագիրը մնում է անհայտ:

Այս առիթով նշենք, որ հռոմեական լեգեոնները բազմաթիվ այլ ավարների հետ Հռոմ տարան արդեն հարյուրավոր տարիներ ձեռքից ձեռք անցած և ստորգետնյա թաքստոց-

[10] Философская энциклопедия, т. 5, М., 1970, с. 332.

ներում պահված արիստոտելյան հռչակավոր գրադարանն ու ձեռագիր գանձերը: Հռոմում դրանք հայտնվեցին անտիկ փիլիսոփայության պատմաբան Անդրոնիկոս Հռոդոսացու ձեռքում, որը կատարեց Արիստոտելի ձեռագրերի համակարգում՝ դրանք բաժանելով երկու խոշոր մասերի՝ "Ֆիզիկայի" և "Մետաֆիզիկայի":

Պլատոնի ակադեմիայի վերջին սքոլարքոսներից է եղել Սիրիանոս Ալեքսանդրացին (վախճանվել է մոտ 450 թ.)՝ նեոպլատոնիզմի աթենական դպրոցի ամենավաղ շրջանի ներկայացուցիչներից մեկը: Նա եղել է Պրոկլեսի ուսուցիչը, ում իրենից հետո փոխանցվել է Ակադեմիայի սքոլարքոսի պաշտոնը: Սիրիանը հայտնի է Պլատոնի և Արիստոտելի երկերի վերաբերյալ իր մեկնություններով: Նա Արիստոտելին ներկայացնում էր որպես մի փիլիսոփայի, որ համաձայն էր Պլատոնի հետ, իսկ Պլատոնին՝ որպես նրա նախորդի:

Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի վերջին սքոլարքոսը եղել է նեոպլատոնական Դամասկիոսը (ծնվել է 458-462 թթ. միջև, մահացել՝ 538 թ.): Նա հեղինակ է իմացաբանության և գոյաբանության հարցերի վերաբերյալ բազմաթիվ երկերի, որոնց մի մասը, ցավոք, չի պահպանվել: Դարերի միջով անցել և մեզ են հասել երկու գրավոր հուշարձաններ, որոնք ունեն փիլիսոփայական ուրույն նշանակություն: Դրանցից մեկը "Առաջին սկզբունքների վերաբերյալ դժվարությունները և դրանց լուծումները" երկն է, մյուսը՝ "Իսիդորի կյանքը" (նշենք, որ Իսիդորը եղել է Դամասկիոսի ուսուցիչը և Պլատոնի ակադեմիայի սքոլարքոսի պաշտոնում նրա նախորդը): Դամասկիոսը առանձնապես զարգացրել է դիալեկտիկան ու միստիկան, և այս իմաստով նա անտիկ նորպլատոնա-կանության եզրափակողն է:

Պլատոնի փիլիսոփայական ակադեմիային դրամատիկական ճակատագիր բաժին ընկավ: Այլևս չդիմանալով պատմական նոր ժամանակներով պայմանավորված փորձություններին՝ Ակադեմիան դարձավ կոպիտ ուժի զոհ և իր գրեթե հազարամյա ուղին ավարտեց 529 թվականին, երբ Բյուզանդիայի Հուստինիանոս I կայսրի (527-565 թթ.) հատուկ հրամանագրով, Աթենքի մի քանի այլ փիլիսոփայական դպրոցների հետ, փակվեց որպես հեթանոսական օջախ: Ակադեմիայի գույքը բռնագրավվեց, նրա անդամներին ցրեցին, որոնք սկսեցին իրենց համար ապաստան որոնել Հունաստանի սահմաններից դուրս: 531 թվականին աթենական նեոպլատոնականների մի խումբ՝ Դամասկիոսի գլխավորությամբ, տարագրվեց Պարսկաստան և ապաստան գտավ պարսից արքա Խոսրով I Անուշիրվանի (531-579 թթ.) արքունիքում, որտեղ և միջնադարյան նեոպլատոնականության սկիզբը դրվեց:

Ակադեմիայի փակման կոպիտ ակտը տողերիս հեղինակին մի պատմական զուգահեռի առիթ տվեց: Մ.թ.ա. 399 թվականին Աթենքի ժողովրդական ժողովում իրեն մահվան դատապարտելու մասին դատավճռի հրապարակումից հետո իր վերջին ճառը Սոկրատեսն ավարտում է դատավորներին ուղղված և հեգնանքով լի հետևյալ խոսքերով. "Դե, արդեն այստեղից գնալու ժամանակն է՝ ես մեռնելու, դուք ապրելու համար, իսկ թե ո՞րն է դրանցից ավելի լավը՝ ոչ ոքի հայտնի չէ, բացի աստծուց":

*Սոկրատեսին մահվան դատապարտած դատավորների անունները վաղուց ջնջվել են սերունդների հիշողությունից: Ճիշտ այդպես էլ վաղուց մոռացության փոշով են պատած բյուզանդական արքունիքի այն գործիչների անունները, որոնք Հուստինիանոսին՝ Բյուզանդիայի այդ նշանավոր կայսրին, որ աննախադեպ հզորության հասցրեց երկիրը, կառուցեց Սոֆիայի տաճարը Կոստանդնուպոլսում, բերդերի համակարգ՝ Դանուբ գետի սահմանագծով, նվաճեց Հյուսիսային Աֆրիկան, Սիցիլիան, Իտալիան, մասամբ նաև Իսպանիան, դրդեցին փակելու Պլատոնի փիլիսոփայական ակադեմիան: Մինչդեռ Սոկրատեսի անունն ու գործը, ինչպես և Պլատոնի փիլիսոփայական ակադեմիայի հոգևոր ժառանգությունն ու ավանդույթները իրենց մշտական տեղն են գրավել համաշխարհային մշակույթի գանձարանում՝ մեր օրերում ներկայանալով որպես զարմանքի ու հիացմունքի, նաև ընդօրինակման արժանի նմուշներ:*

## АНТИЧНЫЙ ОСНОВОПОЛОЖНИК АКАДЕМИЧЕСКИХ ТРАДИЦИЙ: ПЛАТОНОВСКАЯ ФИЛОСОФСКАЯ АКАДЕМИЯ

**АСАТРЯН Г. Е.**

Резюме

Философская академия Платона, являющаяся самым значительным научно-образовательным центром античного мира и положившая начало европейским академическим традициям, была основана в 387 г. до н.э. близ Афин.

Пройдя долгий и плодотворный путь исторической эволюции в пять периодов (Древняя академия, Средняя академия, Новая академия, Четвертая академия, Пятая академия), Академия Платона внесла весомый вклад в развитие философии и естествознания.

Просуществовав без малого 1000 лет, Академия была закрыта в 529 году по эдикту императора Византии Юстиниана I.

Оставшиеся члены Академии вместе с последним схолархом Дамаскием в 531 году были изгнаны в Персию, где нашли убежище во дворце персидского царя Хосрова Первого. Члены Платоновской философской академии стали основоположниками средневекового неоплатонизма.

## ANTIQUE FOUNDER OF THE ACADEMIC TRADITIONS: PLATONIC PHILOSOPHICAL ACADEMY

G. ASATRYAN

Abstract

Platon's philosophical Academy was founded in 387 BC near Athens. It was the most conspicuous scientific and educational center in the ancient world, which gave rise to the academic traditions in Europe.

The historic evolution of the Academy embraced five phases (the Old Academy, the Middle Academy, the New Academy, the Fourth Academy, and the Fifth Academy). The Academy made significant contributions to the development of philosophy and natural sciences.

The Academy was closed in 529 AD by the edict of the Emperor of Byzantium Justinian I after nearly 1000 years of existence.

In 531, a group of Academy members with Damascius, with the last scholarch of the Academy, were exiled to Persia. They found refuge in the palace of the Persian king Khosrov I, and gave rise to medieval Neoplatonism.